

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2016թ. սեպտեմբերի 6-8-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել են ք. Աշխաբադում (Թուրքմենստանի Հանրապետություն) կայացած «Գյուղատնտեսության ոլորտում կառուցվածքային հետազոտությունների անցկացման կազմակերպման մեթոդաբանության փորձի փոխանակում» խորագրով խորհրդակցությանը,
- ✓ 2016թ. սեպտեմբերի 7-9-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը մասնակցել է ք. Կրակովում (Լեհաստան) կայացած «Մարդկային ռեսուրսների կառավարում և վերապատրաստում. ապագա զարգացումներ» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2016թ. սեպտեմբերի 19-20-ը ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը և միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը մասնակցել են ք. Բիշքեկում (Ղրղզստանի Հանրապետություն) կայացած «Կայուն զարգացման նպատակների մոնիթորինգի ազգային համակարգի ներդրում» խորագրով միջազգային կոնֆերանսին,
- ✓ 2016թ. սեպտեմբերի 20-23-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը, ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ս. Հունանյանը և առաջատար մասնագետ Զ. Ավոյանը մասնակցել են ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աշխատաշուկայի վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում կազմակերպված հանդիպմանը,
- ✓ 2016թ. սեպտեմբերի 22-23-ը ՀՀ ԱՎԾ արդյունաբերության, էներգետիկայի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Հ. Հովհաննիսյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Արդյունաբերական վիճակագրության կիրառումը ԱՊՀ երկրներում արդյունաբերական աճի ընդհանուր միտումների վերլուծության համար» թեմայով սեմինարին,
- ✓ 2016թ. սեպտեմբերի 26-30-ը ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Յու. Պողոսյանը մասնակցել են ք. Ալմաթիում (Ղազախստան) կայացած Կայուն զարգացման նպատակների համար տվյալների և վիճակագրության վերաբերյալ երկրորդ ենթատարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը,

- ✓ 2016թ. սեպտեմբերի 28-30-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը և ՀՀ ԱՎԾ ԳՀՀ վարչության պետի տեղակալ Բ.Գևորգյանը մասնակցել են ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Մարդահամարների և կացարանների համատարած հաշվառման փորձագետների խմբի աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 3-5-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Մինսկում (Բելառուս) կայացած «Պաշտոնական վիճակագրության մոդերնիզացում» խորագրով Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների և Մոնղոլիայի համար բարձր մակարդակի սեմինարին և հոկտեմբերի 6-7-ը՝ Պաշտոնական վիճակագրության փոխակերպվող օրակարգի վերաբերյալ տարածաշրջանային կոնֆերանսին,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 3-14-ը ՀՀ ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ս. Խաչատրյանը մասնակցել է ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Եռամսյակային ազգային հաշիվներ» թեմայով դասընթացին,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 6-7-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած TransMonEE ցանցային հանդիպմանը,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 10-12-ը ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Դայջոնում (Կորեայի Հանրապետություն) կայացած Միջազգային աշխատանքային միգրացիայի վիճակագրության վերաբերյալ աշխատանքային ծրագրի շրջանակում ԱՄԿ – ԿՈՍԱՏ համագործակցությամբ կազմակերպված երկրորդ աշխատաժողովին,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 11-12-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Միգրացիային առնչվող Կայուն զարգացման ցուցանիշների իրականացման գործընթացում առաջխաղացման գնահատում» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 11-12-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը մասնակցել է ք. Օտտավայում (Կանադա) կայացած Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի նիստին,

- ✓ 2016թ. հոկտեմբերի 11-14-ը ՀՀ ՎՊԽ անդամներ Յու. Պողոսյանը, ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը, նույն բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը և առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են ք. Հռոմում (Իտալիա) կայացած «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Ջրի հաշիվներ» բաղադրիչի շրջանակում կազմակերպված հանդիպմանը,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 18-20-ը ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական Գ. Մարտիրոսյանը և ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը մասնակցել են ք. Մինսկում (Բելառուս) կայացած «Գների վիճակագրություն» թեմայով ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների մասնագետների համար սեմինար-խորհրդակցությանը,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 26-28-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Հռոմում (Իտալիա) կայացած Գյուղատնտեսական վիճակագրության վերաբերյալ յոթերորդ միջազգային կոնֆերանսին,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 27-28-ը ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետներ Գ. Պետրոսյանը և Զ. Ավետիսյանը մասնակցել են ք. Քիշնևում (Մոլդովա) կայացած Գների վիճակագրության վերաբերյալ արևելյան գործընկերության վիճակագրության պանելի չորրորդ հանդիպմանը,
- ✓ 2016թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 2-ը ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը և ՀՀ ԱՎԾ «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի ավագ վիճակագիր Դ. Մարտիրոսովան մասնակցել են ք. Սոչիում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած ԱՊՀ երկրներում աղքատության վիճակագրության ներդաշնակեցման վերաբերյալ բարձր մակարդակի սեմինարին: